յայժմեան գերեզմանոցին, որ և գոյրն, ասեն, 'ի հնուց. և է սագաշէն կոփած քարամբք. կարի յետոյ կառուցեալ քան զփոքրիկ զմբէթաւոր եկեղեցին. կիսաբոլորակ կամար խորանին կանգուն կայ հանդերձ հիւսիսային որմով. իսկ մնացեալ շինուածն խոնարհեալ այժմ. յորմն հիւսիսային երևին երկոքին որմասիւնք յորոց ձգեալ են կամարք 'ի հարաւկոյս. ուր և մերձ յորմն արևմտեան 'ի վերայ մնացորդ որմոյն երևի որմասիւնն ։

Մի դուռն ունի տաճարն յարևմտից, 'ի շրջապատս նորա յաւերակսն անդ երևին տեղիք սենեկաց. այլ ոչ գոյ արժան յիշատակի ։

Եկեղեցին երկրորդ ընդ մէջ գեղջն գոլով 'ի հիւսիսոյ՝ է փոքրիկ խաչաձև և գմբէթարդ. անխորան և անաւազան. ունի մի սեղան և մի դուռն յարևմտից ։

---

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԱՐՈՒՃ ԱՒԱՆԻ։

Հոյակապ եկեղեցի Արուճ աւանի յԱրագածոտն շինեալ 'ի Գրիգորէ իշխանէ Մամիկոնեան, է կարի մեծ, երկայնութեամբ յառաջոյ սեղանոյն ցդուռն արևմտեան՝ քառասուն քայլ և լայնութեամբ՝ քսան և վեց. չունի զսիւն յայսմիկ երկարութեան խրում. այլ կաթուղիկէն կառուցեալ 'ի վերայ չորից որմասեանց, որք վերուստ 'ի վայր յառաջացեալք են յորմոյն ընդ մէջ Եկեղեցւոյն իբրև բկոտասան ոտք. բաց 'ի չորից կամարայն, յորոց վերայ կաթուղիկէն, են և այլ երկու կամարք 'ի հիւսիսային որմունս եկեղեցւոյն ստոր քան զմիջինսն յառաջացեալ նովին լայնութեամբ ընդ մէջ եկեղեցւոյն. կամարքն են առ հասարակ երկկարգ, և 'ի ներքին խարսխաց ցխարիխսն վերին՝ եզերքն են անկիւնաւորք և միջին վայրն է բոլորշի ։

Ի յետին դասու յերկուց կողմանց են երեք կարգ և կամարաւոր լուսամուտք մեծք. իսկ 'ի ճակատս երից դրանցն՝ չորք, երկու մեծ 'ի խոնարհ՝ յաջ և յահեակ կոյս դրանն, և երկու միակարգ և փոքունք 'ի գլուխս դրանցն, երկու երկու յառաջին դասու նոյնպէս յերկուց կողմանց և երեք մեծ յաւագ խորանն, որոյ վէմքարն ցարդ անկեալ առ տեղեաւն, վերնախարիսխք կամարացն են ոչ իբրև այլ եկեղեցեացն դրուագաւորք, այլ հաւասար յորմն բարակ շրջանակօք որոշեալ ։ Կաթուղիկէն խոնարհեալ է խսպառ. վասնայսորիկ և ցկէս բարձրութեան դրանցն լցեալ է եկեղեցին քարամբք և կրովք աւերանաց. երկու ևս խորանք ի կողմանց սեղանոյն, առ հնութեանն չունի տաճարն 'ի ներքոյ զդրուագաւոր քանդակագործութիւնս ։

Հինգ դրունք են տաճարիս մեծի. որոց զառաջեաւ ամփարձեալ են բրգունս ներկայ մահմէտական բնակիչք. և զմին 'ի հարաւոյ միայն թողեալ, ընդ որ լցեալ 'ի ներքս մակաղեն զխաշինս 'ի ձմերան, յապահովութիւն 'ի գազանաց ։

Արձանագրութիւնք եկեղեցւոյս յառաջ բերեալ են 'ի Շահխաթունեանցէ քաղուածովք յիւրում ստորագրութեան, զանց արարեալ զբազմօք անվերծանելի եղելովք 'ի մերում տեսութեան ։

Այս Կաթուղիկէ Եկեղեցի Արուճ (Թալիշ աւանի կառուցեալ է 'ի Գրիգոր Իշխանէ Մամիկոնեան յամի Տեառն 671. և է հնագոյն գրեթէ քան զայլ եկեղեցիս եղեալս յԱրագածոտն գաւառի ։

ԱՐՍԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

---

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԸՄՈՍ ԿՈՄԵՕՆԻՈՒՍ ԵՒ ՆՈՐԱ

•ՏԻՏԱԳԻԳԻԳԱ ՄԱԿՆԱ•

(Շարունակութիւն)

Թ ղ ԳԼԽԻՑ.

### ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՊԷՏՔ Է ՍՈՎՈՐԵՆ ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ.

Ո՛չ միայն հարուստների և իշխանների, այլ և չքաւորների որդիքը, տղայքը և աղջկունքը, քաղաքներում և գիւղերում, ամենքը պէտք է ուսումնարան ուղարկուին

Մարդիկ ծնուած են՝ որ մարդիկ լինին, այսինքն՝ որ բանաւոր արարած, Աստուծոյ նմանու-

թիւն լինին։ Ուստի ամենքը պէտք է կատարելագործուին գիտութեամբ, առաքինութեամբ և բարեպաշտութեամբ. որպէս զի մի սերունդը արժանաւորապէս կարողանայ պատրաստել միւս սերունդ։ Մարդուն ուսում և կրթութիւն չտալ՝ ասել է՝ թէ անարդարութեամբ վարուել նորա հետ։ Աստուծոյ առաջև ամենքը հաւասար են. այս օրէնքը նոյն զօրութեամբ տիրապետում է և ուսումնարաններում։

Նա մանաւանդ՝ որ մենք չգիտենք, թէ նախախնամութիւնը ինչ վիճակի է ճակատագրել այս կամ այն մարդուն. ուստի որպէս ամենաչքաւորը, նոյնպէս և ամենահարուստը մի օրինակ պիտի կրթուին։ Արեգակը լուսաւորում է, ջերմացնում է և կենդանացնում է բոլոր բնութիւնը, որպէս զի բոլոր բնութիւնը կանաչի, ծաղկի և պտուղներ բերէ. նոյնը պէտք է գործէ և ուսումնարանը։

Մի քանի երեխաների բթամտութիւնը կարող չէ թուլացնել այս հայեացքի ճշմարտութիւնը։ Որքան ապաշնորհ է քանքարը, որքան ծոյլ է ոգին, այնքան նա օգնութեան կարօտ է, որպէս զի կարողութեան չափ բթամտութիւնից սթափուի։ Բայց և չկայ անգամ՝ այնպիսի անբաղդ մանուկ, որին անկարելի լինի մի որ և իցէ չափ բերելը կրթութեամբ։ Եթէ գլուխը չի կարելի գիտութիւններով լցնել, այնու ամենայնիւ կարելի է նորա սրտի վերայ բարոյականութիւն դրոշմել գեղեցիկ սովորութիւնների միջնորդութեամբ։ Դանդաղ գլուխը անգամ շահւում է, եթէ աշխատելուց չի վախենում։ Մի քանի ծառերը շուտ, միւսները քիչ պտուղ են բերում. մի քանիսը վաղ, միւսները ուշ են պտուղ բերում. բայց այգեպանը միօրինակ խնամք է քաշում բոլորի վերայ։ Ի՞նչու մենք ևս խնամք չքաշենք գիտութեանց պարտիզում, այսինքն ուսումնարանում, զանազան ընդունակութիւնները զարգացնելու և կրթելու համար։ Որոնց Աստուած որ և իցէ ընդունակութիւններից փոքր ինչ մաս տուել է, ոչ ոք նոցանից չ՚պէտք է զրկուի ուսումնարանի առատաշնորհութիւններից։

Նմանապէս հիմնաւոր պատճառ չկայ՝ որ կանանց սեռը իմաստութիւն ուսանելուց զրկուի։ Կանայքը նոյնպէս Աստուծոյ նմանութիւն են, նոյնպէս ընդունակութիւններով են պարգևած, և գերազանց հանդիսանալու ճանապարհը նոցա համար ևս նոյնպէս բաց է։ Կանայքը թագաւորել են ազգերի վերայ, թագաւորներին ձեռնտու խորհուրդներ են տուել, բժշկականութեամբ են պարապել, մարգարէուհիներ են եղել և այլն։ Անարդարութիւն կը լինէր հրաժարեցուցանել նոցա մեր ուսումնարաններից։

Եթէ մինը ասէր՝ ի՞նչ բարիք յառաջացնելու են բոլորեքեանք, եթէ նոքա՝ թագաւորից սկսած մինչև յետին մշակը, -քաղաքացին և գիւղացին, տղան և աղջիկը, միօրինակ հաւասար կրթուած լինին։ Ես կասեմ, որ դորանից բնաւ ոչ ոք վնաս կրելու չէ։ Իւրաքանչիւր մարդը դեռ շատ նիւթ կը գտնէ բարեաց վերայ խորհրդածելու, բարեաց պտուղը վայելելու։ Բոլորեքեանք ուրախ և գոհ կը լինին իւրեանց աշխատութիւններից և գործերից, սիրով կը նուիրեն իւրեանց մտքերը Աստուծոյ արարածների վերայ խորհրդածելու, և վերջապէս չարեաց հետևող չեն լինիլ։

ԺԳ ԳԼՈՒԽ.

## ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԻՆԻ։

Ուսումնարաններում պէտք է ամենեցուն ամենայն բան ուսուցանել։ Այս չէ նշանակում, իբրև թէ ամենեքեանք պէտք է սովորին, և այն ևս կատարելապէս՝ բոլոր գիտութիւնները և արուեստները։ Այս բանը ոչ հնարաւոր և ոչ օգտակար կը լինէր։ Ամենայն գիտութեան, ամենայն արուեստի առարկայը շատ ընդարձակ է. հանճարաւորն անգամ չէ հասնում այն նպատակին, որ կատարելապէս գիտուն և հմուտ լինի։ Նա մանաւանդ՝ որ ամենայն գլուխ կարող չէ գերազանց հանդիսանալ ամենայն գիտութեան և հմտութեան մէջ։ Մեր պահանջողութեամբ մենք միայն այն ենք կամենում ասել, որ բոլորեքեանք պիտի ուսանին հիմք, եղանակ և նպատակ այն ամենայն բանի, ինչ որ աշխարհքիս երեսին կայ՝ գործվում է, և պիտի ուսանեն այնքան՝ որքան այդպիսի ուսումը հարկաւոր է մարդուն իւր կենցաղավարութեան համար։

Ուրեմն ուսումնարաններում առանց բացառութեան՝ պէտք է դնել այն վերջնակէտին, որ նոքա բարերար դառնան իւրեանց սնուցեալների բոլոր կեանքի համար, սոցա խելքերը գիտութիւններով և արուեստներով լուսաւորելով, խօսողութեան ձիրքը կատարելագործելով, բարքը ազնուացնելով և բարեպաշտութեան կայծը բորբոքելով։

Ուսումնարանները մարդկութեան արուեստանոցներ են, որոնք խնամք են քաշում, որ մարդս՝ մարդ դառնայ, այսինքն՝ որ բանական արարած, կենդանեաց ու իւր անձի իշխան դառնայ։ Այս կէտին նոքա՝ այսինքն՝ ուսումնարանները, հասնում են բանականութիւնը լուսաւորելով, զգուշութիւն ընտելացնելով վարմունքների մէջ և սիրտը առ Աստուած նուիրեցուցանելով։

Այս երեք բանը պէտք է հաստատապէս դրոշմուին ամենայն ուսումնարաններում մանուկների մէջ։

Ամենայն իրերը՝ մեր վերաբերութեամբ՝ երեք դասի կարող ենք բաժանել։ Մի քանիսը մեր նկատողութեան առարկաներ են՝ զորօրինակ, երկինք և երկիր իւր պարունակութեամբ. միւսները մեր հետևողութեան առարկաներ են՝ զորօրինակ, ներդաշնակ կարգ տիեզերքի. վերջապէս՝ մի քանիսները մեր ուրախութեան առարկաներ են։ Իրերի վերայ տեղեկութիւն ունենալով՝ մի և նոյն ժամանակ կարելի է թէ կանոնաւոր կերպով ներգործել, և թէ գործ ածել նոյն իսկ իրերը։

Մեր հոգւոյ էութիւնը՝ բանականութեան, կամքի և յիշողութեան մէջն է։ Բանականութիւնը քննում է իրերի զանազանութիւնը, կամքը բարին ու օգտակարն է ընտրում և չարն ու վնասակարն է մերժում, իսկ յիշողութիւնը ապագայ գործածութեան համար պահպանում է բոլորը, ինչ որ երբեմն պարապեցրել է մարդիս բանականութիւնն և կամքը և կամ ինչ որ տպաւորութիւն է ունեցել դոցա վերայ, — և միւս կողմանէ միշտ մտաբերում է հոգւոյն՝ թէ պատասխանատու է Աստուծոյ առաջև կամ կախում ունի նորանից։ Այսպիսի գիտակցութեան ժամանակ յիշողութիւնը հոգւոյ այլ մասերի հետ դառնում է [illegible]։ Ուստի ուսումնարանները պարտաւոր են հաղորդել այն, որ ինչ լուսաւորում է բանականութիւնը՝ ուղևորում է կամքը և միշտ գրգռում է մարդիս խղճմտանքը, որպէս զի բանականութիւնը թափանցիկ դառնայ, կամքը — անսխալ լինի ընտրութեան մէջ, իսկ խղճմտանքը — միշտ գործունեայ։ Որպէս երեք այս հոգեկան ընդունակութիւնները անանջատելի են և կազմում են հոգւոյ էութիւն, այնպէս և կրթութիւնը, առաքինութիւնը և բարեպաշտութիւնը անբաժան պէտք է լինին։

ԺԱ-դ ԳԼՈՒԽ։

## ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ ԴԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ ՉԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՒՐԵԱՆՑ ՆՊԱՏԱԿԻՆ։

Որպէս զի ուսումնարանները համապատասխան լինին իւրեանց նպատակին, նոքա պէտք է մարդկութեան արուեստանոցներ լինին. ուր աշակերտների ոգին արիանում է իմաստութեան լուսով, և ուր սիրտը ներդաշնակութիւն է գտնում իւրեան հետ, աշխարհքի հետ և Աստուծոյ հետ։

Այսպիսի ուսումնարաններ չկան մինչև այսօր։ Ուսումնարանները մինչև այսօր հասարակաց ժառանգութիւն չեն դառել, իսկ դաստիարակութեան եղանակը միանգամայն չէ գրաւում պատանիներուն։

Նա մանաւանդ՝ որ աւաններում և գիւղերում բնաւ չկան ուսումնարաններ։

Իսկ ուր որ կան ուսումնարաններ, այն տեղ նոքա հիմնուած են հարուստների որդւոց համար. ուր աղքատների որդիքը՝ միայն պատահմամբ ուրիշի կարեկցութիւնով միայն կարող են մտնել։ Այս իրողութիւնը օգտաւէտ չէ կարող լինել, ոչ տէրութեան, ոչ եկեղեցւոյ համար, վասն զի որքան քանքարաւոր գլուխներ այսպէս առանց կրթութեան մնում են և անբախտանում են։

Դաստիարակութեան եղանակները այնպէս վատ են, որ այդ ուսումնարանները առաւել նմանութիւն ունին յանցաւորները խրատելու համար հիմնուած տներին. այդ ուսումնարանները զարհուրանքի տեղեր են քանքարաւորների համար. աշակերտները աշխատում են որքան կարելի է

շուտով դուրս գալ այն տեղերից, որ մնեն ճարտարապէտների և վաճառականների արուեստանոցները։

Եւ ինչ յառաջադիմութիւն կայ ուսումնարաններում. Ահա պատասխան՝ այն, ինչ որ մի տարուայ ընթացքում կարելի է ձեռք բերել՝ հինգ, տասն և առաւել տարիների աշխատանքով է ստացվում. Այն՝ ինչ որ հեշտութեամբ կարելի է ազդել ոգուն, մուրճով և բևեռներով է պնդացնում նորա մէջ. Այն՝ ինչ որ շօշափելի կերպով կարելի է ներկայացնել մանուկներին, հաղորդում է մտքը խօսքերով, առեղծուածներով և խրթնաբանութիւններով.

Այնպէս են հաղորդում գիտութիւնները, որ նոքա առաւել զարդ կարող են համարուել, քան թէ իրական լրացումն կենսական պահանջների։

Լատինական լեզուին գերազանցութիւն են տալիս, և արհամարհում են մայրենի լեզուն. բայց և Լատինականը անգամ ուսուցանում են թուլութեամբ։ Երեխան մի քանի ամսում ուսանում է մայրենի լեզուն, իսկ մենք 20 տարում հազիւ սովորում ենք Լատինական լեզուով թօթովել այն՝ ինչ միկիտանները, ծառաները և արուեստաւորները առաւել շուտ են սովորում որ և իցէ օտար կենդանի լեզու. Այսպէս զուր ի զուր շատ ժամանակ է կորչում քերականութեան և բառարանների վերայ, կեանքի համար ոչինչ օգուտ չըքաղելով։ Եւ այս բոլորը միայն վատ դասատուութեան հետևանքն է*).

ԺԲ-րդ ԳԼՈՒԽ

## ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԻԼ.

Դժուար է, համարեա անկարելի է, բժշկել բոլոր հիւանդութիւնները. բայց բժիշկները այնու ամենայնիւ փորձում են բժշկել նոցա. Այսպէս և մենք կը փորձենք ուղղել ուսումնարանական գործը.

Մենք խոստանում ենք մի այնպիսի ուսումնարանի կազմութիւն, որով՝ ա.) իւրաքանչիւր մանուկ մարդկային էակը կրթութիւն կստանայ, բացի նոցա, որոնց Աստուած ամենևին բանականութիւն չէ տուել. բ.) այնպիսի կրթութիւն, որով մարդս կըդառնայ իմաստուն և բարեպաշտ. գ.) այդ կրթութիւնը պէտք է կատարուի մինչև արիական հասակը, որպէս պատրաստութիւն կեանքի համար. դ.) կ'կատարուի այն առանց բռնութեան և խստութեան՝ ամենախորժելի կերպով. ե.) այդ կրթութեան նպատակն է հաղորդել ոչ թէ պըսպղուն և վեր ի վերոյ գիտութիւններ, այլ ճշմարիտ, հիմնաւոր, արժանի մարդավայել գիտութիւններ, և նմանապէս մարդավայել առաքինու-

(*) Ով կը կարծէր, որ այս գրած է ոչ թէ 1657 եւ 1857 թ. եւ որ այս տեղ խօսվում է 17-րդ եւ ոչ 19-րդ դարու ուսումնարանների մասին:

Ծանօթ. Պ———լ—ն

Այս ծանօթութեամբ Պ. Պաուլսոնը ակնարկում է նորա վերայ, որ մեր ժամանակներում եւս, դեռ կան Լատինական եւ Յունական լեզուների պաշտպաններ:

Յայտնի է, որ 50 թուականների վերջերում Ռուսաց գրականութեան մէջ սկսուեցաւ Ռէալիզմի եւ կլասսիցիզմի պաշտպանող կուսակիցների բանակռուիւը, եւ որ կառավարութիւնը, Գիմնազիոնների կանոնադրութիւնը վերանորոգելու ժամանակ, երկու կուսակիցներին եւս բաւականութիւն տալու միջին ճանապարհ բռնելով, այսինքն ժողովրդին իրաւունք տալով, ըստ իւր հաճութեան բաց անել կամ ռէալական կամ կլասսիկական Գիմնազիոն: Թէպէտ եւ կառավարութիւնը առաւել շատ իրաւունքներ տուեց կլասսիքական Գիմնազիոններին, եւ այդ պատճառաւ սկզբում Ռուսաստանում առաւել շատ կլասսիկական քան ռէալական գիմնազիոններ բացուեցան. բայց Ռուսաց երեւելի մատենագիրները չեն վհատում, եւ հաւատացած են, որ մօտիկ է այն ժամանակը, երբ ռէալական կրթութիւնը միանգամայն կը յաղթէ կլասսիկական կրթութեան:

Այժմ դառնալով մեր ազգային կրթութեան, պէտք է ասենք, որ մեզանում եւս սկզբնական կրթութիւնը գրաբառով սկսելը նոյնքան վնաս պէտք է համարուի, որքան Լատինականը Եւրոպայում, որի դէմ բողոքում է Կոմենիուսը:

Ծանօթ. Թ—րգ.

թիւն՝ և բարեպաշտութիւն. գ.) և այդ կրթութիւնը կըստացւի ոչ թէ դժուարութեամբ, այլ հեշտութեամբ։ Դա միայն պահանջում է վարժելու համար ամենայն օր կ ժամ, և մի վարժապետ անգամ պիտի կարողանայ այդ կրթութիւնը հարիւրաւոր-աշակերտների տալ։

Այս խոստմունքներիս ոչ ոք չի հաւատալ։ Այո, այսպէս է մարդկային բնութիւնը, որ սկզբում նա անկարելի է համարում որ և իցէ գիւտը կամ նորութիւնը. իսկ յետոյ՝ երբ արդէն այդ գիւտը իրագործուած է, նա զարմանում է, որ այդ գիւտը վաղուց չէ հնարուած։ Այսպէս վիճակ ունեցաւ մեծն Արքիմէդի գիւտերը. նախ ծաղրում էին նորան, ապա պաշտում էին նորա հանճարը։

Այսպէս վիճակ գտաւ և մեծն Կոլոմբոսի գիւտը։ Ո՛չ մի թագաւոր չէր կամենում սկզբում հաւատալ և օգնել նորան։ Ընկերները անգամ նորան կամենում էին ծովը ձգել. բայց նա որպէս կարողացաւ ոտքի վերայ ձու կանգնեցնելը, նոյնպէս և Ամերիկայ գտաւ։

Այսպէս էր և տպագրութեան վիճակը, տպագրութեան՝ որ աշխարհքի երեսից արտաքսեց ձեռագիր գրքերը։

Բայց վառօդի գիւտը՝ ո՞վ կարող էր երևակայել այսպիսի փոփոխութիւն պատերազմական արուեստի մէջ։

Նոյնը կրկնուեցաւ և գրական արուեստի գիւտի հետ. թղթի կտորները հիմա հեշտութիւամբ տարածում են մեր մտքերը աշխարհքի ամենայն կողմերը։

Նոյնը կկրկնուի մեր նոր ձեռնարկութեան հետ։ Կզարմանան և կըբարկանան, թէ "ահա մարդ որ համարձակում է անկատար համարել մեր ուսումնարանները, մեր գրքերը և դաստիարակութեան եղանակները, և առաջարկում է նոցա տեղ մի անսովոր՝ ու շատ կասկածելի հնար"։

Թէ և ապագան կը հաստատէ իմ հաւանականութիւնը, բայց ես կամենում եմ այժմ իսկ ապացուցանել, թէ ամենայն մարդկային էակ կարող է ստանալ թէ բաւականին գիտութիւն և թէ բարի վարք ու բարք՝ առանց այն ամենայն դժուարութիւնների և վշտերի, որով նոքա հաղորդւում են ուսանողներին։

Այս ապացուցանելու հիմքը յետագայ դրութիւնից է. ամենայն էակը՝ ոչ միայն դիմում է, ուղղւում է այն կողմը, ուր խոնարհում է նորան բնութիւնը, բայց նա մինչև անգամ դոյն ինչ ուրախութեամբ ինքը շտապում էջայն կողմը, այնպէս որ նա վշտանում է հարկաւ, երբ նորան խոչընդոտն են լինում հետևելու այդ իւր բնական ուղղութեանը։

Բնաւ հարկաւորութիւն չկայ ստիպել թռչունին՝ որ թռչի, ձկան՝ որ լողայ, եղնկին՝ որ վազէ. այս նոքա իւրեանք անում են, հէնց որ նոցա անդամները սկսում են ամրանալ։ Ջուրը ինքը հոսում է դէպ ի վայր, կրակը ինքը բորբոքւում է, բոլորակ քարը գլորւում է, տափակը անշարժ մնում է։ Աչքը և հայելին բաւական՞ է որ լոյս լինի,—իսկոյն կընդունին իւրեանց մէջ մարմիններից ցոլացող լուսի շառաւիղները և յետ կարձակեն սերմը. խոնաւութեան և ջերմութեան ժամանակ՝ ինքը աճում է։

Իսկ եթէ մարդկային էակի մէջ 'ի բնէ կայ գիտութեան, առաքինութեան և բարեպաշտութեան սերմեր, դորանից հետևում է, որ նոցա աճեցնելու համար հարկաւոր է սակաւ ինչ ձգտում և բանական առաջնորդութիւն։

Բայց կասեն ինձ, ամենայն կոճղից*) չի կարելի Մերկուրիոս**) քանդակագործել։ Ես ասում եմ՝ բայց ամենայն մարդէն կարող է մարդ դուրս գալ։

Այնու ամենայնիւ՝ միւսը կասի, մեր զօրութիւնները թուլացան մեղսակործան լինելով Ադամի օրից։ Ես պատասխանում եմ՝ ասենք թէ թուլացան, բայց ոչ իսպառ ոչնչացան։ Որպէս մենք սովորում ենք ուտել, խմել, մանգալ, պար գալ, ձեռագործութիւններով պարապել, և այս բոլորը

(*) Մարմին առանց գլխոյ։

(**) Մերկուրիոս կամ Հերմէս որդի Արամազդայ եւ Մայեայ, շատ արուեստների հնարող, չաստուած ճարտարախօսութեան, վաճառականութեան եւ տաղկութեան, չաստուածների թարգման եւ պատգամաւոր։ Նկարում է իւր ոտքերի եւ գլխի վերայ թեւաւոր ի նշանակ երագութեան, եւ կրկին օձերից փաթաթած գաւազան ձեռին։ Սորա պարտաւորութիւնն էր մեռեալների հոգիները դժոխքը տանել։

սովորում ենք առանց ամենայն դժուարութեան, նոյնպէս և մենք կարող ենք վարժել մեր ոգին, եթէ մենք կունենանք պիտանի առաջնորդութիւն։ Ձիավարժը՝ ձիուն սովորեցնում է պար գալ, գլուխ տալ, վեր ի բարձրացնել առջևի ոտները և պտոյտ գալ. արջավարժը՝ արջին զանազան անուններ է սովորեցնում. շունը սովորում է ծառայել, Ագռաւները, Թութակները, Կաչաղակները, Սարեկները խօսել են սովորում։ Դոքա բոլորը անբնական գործեր են. մի՞թէ մարդս չի սովորի՝ ինչ որ բնական է նորան։

Բայց դարձեալ կ'ասեն, գործի դժուարութիւնը այնպիսի մի դժուարութիւն է, որ ոչ ամենայն մարդ կարող է հասկանալ այդ։ Ես պատասխանում եմ, ուստի՞ է այդ դժուարութիւնը։ Զի ցոլացնում արդեօք և բեկբեկում լոյսի շառաւիղները՝ հայելին և ամենախաւար մարմինը, եթէ նա ըստ կարգին լուսաւորուած է։ Զի արձակում արդեօ՞ք հողը սերմի շառաւիղներ, եթէ մենք չողացանք իր ժամանակին և հարկաւոր տեղում սերմը ցանել։

Զկայ այնպէս բարձր տեղ, այնպէս աշտարակ, այնպէս սար երկրի վերայ, որի վերայ չկարողանար բարձրանալ այն մարդը՝ ով որ ոտ ու ձեռք ունէր. ով գիտէ թէ ինչպէս պէտք է տախտակները և գերանները կանգնեցնել, կամ թէ ինչպէս պէտք է աստիճաններ փորել ժայռերում և այլն։ Եթէ մարդկանց բազմութիւնը գիտութիւն կատարելապէս չի ստանում, այս պակասութեան մեղաւորը երբեմն գործածած դասատուութեան եղանակն է, երբեմն ինքեանք դաստիարակիչները, որ թերի ընթացք են բռնել, թերի միջոցներով են վարժել։

Բայց ասում են էլի, թէ լինում են այնպիսի բթամիտ գլուխներ, որ նոցա մէջ ոչինչ չէ մնում։ Պատասխանում եմ՝ ճշմարիտ չէ։ Ամենակեղտոտ հայելին անգամ որ և իցէ կերպիւ դեռ երևցնում է նորա առջև եղած առարկան. ամենաաղտոտեալ թղթի վերայ անգամ՝ դեռ կարելի է այս կամ այն եղանակով որ և իցէ բան գրել։ Բայց հարկաւոր է հայելին և թուղթը մաքրել. էն ժամանակ եւ առաւել բան կարելի կըլինի տեսնել և գրել։ Դանդաղ գլուխներին անգամ՝ դեռ շատ բան կարող են հասկանալ։ Զկայ այնպիսի ծառ, որը մշակելու անկարելի լինի. ամենատգեղ կոճղից անգամ դեռ կարելի է որ և իցէ օգտաւէտ բան գոյացնել։ Ո՞ւր մնաց՝ որ կատարեալ բթամիտ գլուխներն նոյնքան եւ սակաւ են, որքան և ի բնէ պակասաւոր անդամ ունեցող մարդիկը հազուագիւտ են։ Միայն կուրութիւնը և խլութիւնը՝ որ 'ի բնէ հազուագիւտ են, սակաւ ինչ դժուարութիւններ են պատճառում. բայց և այս պակասութիւնները կարելի է թուլացնել և ոչնչացնել. այսինքն՝ այդ մարմնաւոր պակասութիւններից յառաջ եկած հոգեկան թերութիւնները՝ ուրիշ զգայարանաց միջոցաւ փոքր ի շատէ լրացնել. քաջ յայտնի է մունջերի և խուլերի համար հիմնած ուսումնարանների հրաշագործութիւնքը։

Մի հակաճառութիւն ևս։ Եթէ ասում են, ոչ ամենայն գլուխները զրկուած են ուսանելու ընդունակութիւնից. գէթ բազմութիւնը սէր չունի առ ուսումն, իսկ ով սէր չունին՝ նոցա սովորելու ստիպեցնելը նոյնքան անախորժելի է, որքան և անօգուտ։ Մինը կարող էր, բայց չի ցանկանում. միւսը ցանկանում է, բայց չի կարող. ուրեմն բարւոք է երկուսին ևս դուրս վանել։ Բայց անուսումնասիրութեան պատճառն ի՞նչ է։ Արիստոտելէսը շատ ուղիղ է ասում՝ "Ուսումնասիրութիւնը բնածին է մարդուն"։ Յաճախ անուսումնասիրութեան գրգռող ծնողաց չափազանց փափկասրտութիւնն է. թեթևամիտ հասարակութիւնը մանուկների մէջ զարգացնում է մոլի ցանկութիւններ. որդիքը շատ անգամ տեսնում են իշխանների անգործութիւնը, նոցա զբաղում է զբօսանքները, և նոցա մտքերը ցրւած դառնում են։ Պէտք է միայն տղայոց սթափել այդ կեանքից, ու կենդանացնել նոցա միտքը, և աշա ուսումնասիրութիւնը նոցա մօտ կը վերադառնայ։ Որպէս ճախարակագործը փայտից նախ մշակում է գաղափարի սեր, որպէս զի յետոյ նորանից որ և իցէ մի նոր և կոկած բան շինէ, որպէս դարբինը նախ տաքացնում և փափկացնում է երկաթը, որպէս զի յետոյ օգտէ կռահարել (ծեծել). որպէս ոստայնանկը նախ թելեր է պատրաստում, որպէս զի յետոյ հիւսէ. այսպէս և վարժապետն նախ պէտք է աշակերտին պատրաս-

*տէ որ այս վերջինը յետոյ սիրով ընդունէ կըրթութիւնը։*

*Վարժապետը պէտք է իմանայ, թէ ինչպէս պէտք է վարուել զանազան ընդունակութիւնների հետ. Ա՛յլ վարմունք պէտք է ունենալ սրամիտ գլուխների հետ, այլ բթամիտների հետ, այլ հեզ ու յօժարականների հետ, այլ բիրտ ու ծանրերի հետ, այլ ուսումնասէրների հետ, և վերջապէս այլապէս վարուել նոցա հետ՝ որոնք մեքենայական աշխատութիւնների են ընդունակ։*

*Քննենք մօտիկ զանազան գլուխները։ Առաջին կարգում շարուած են սրամիտները՝ և ուսման փափագողները, որոնք ամենայն գիտութիւնների ընդունակ են։ Նոցա միմիայն կերակուր է հարկաւոր, և նոքա որպէս ազնիւ բոյսերը՝ աճում են ինքնիրանից։ Միայն հարկաւոր չէ շտապեցնել, որպէս զի վաղօրօք չը թուլանան և չըմաշուին։*

*Միւսները սրամիտ են, բայց դանդաղ, և մի և նոյն ժամանակ բարի և խոնարհ կամք ունին. սոքա խրախուսանքի են կարօտ։*

*Մի ուրիշները սրամիտ և ուսումնասէր են, բայց կոպտու և յամառ են։ Ուսումնարաններում նոցա սովորաբար կատաղի են համարում. բայց եթէ նոցա կրթութիւնը կանոնաւոր ձևով է կատարւում, նոցանից սովորաբար մեծ և երևելի մարդիկ են դուրս գալիս։ Այդպիսի գլուխ էր Թեմիստոկլէս մեծ Աթենացի զօրավարը։ Դաստիարակիչները պիտի զգուշանան, որ ազնիւ ձիերից էշեր առաջ չըգան։*

*Լինում են դարձեալ հնազանդ և ուսման փափագող գլուխներ, բայց դանդաղ ու սակաւ ինչ բթամիտ։ Նոքա սիրով և յօժար կամքով միշտ հետևում են իւրեանց առաջև գնացողներին. բայց որովհետև նոքա ծանրութեամբ են վեր բարձրանում, ուստի հարկաւոր չէ նոցա բեռնաւորել որևիցէ դժուար բանով կամ պահանջել նորանից արագ կատարումն, բայց պէտք է կարողութեան չափ օգնել նոցա, կազդուրել և խրախուսել. Նոքա առաւել ուշ են հասնում նպատակին. բայց հասածները առաւել հաստատութիւն կունենան, ինչպէս և ուշ հասնող պտուղները։ Կնիքը մի փոքր դժուար է արծճի մէջ դրոշմել. բայց նա առաւել հաստատ է՝ քան մեղրամոմի մէջ դրոշմուածը։ Ուստի այսպիսի գլուխները չըպէտք է մերժուին ուսումնարանից։*

*Յետոյ լինում են բթամիտ և ծոյլեր։ Եթէ սոքա կամակոր չեն, սոցա ևս կարելի է ուղղել. բայց սոցա հետ վարմունքը շատ մեծ համբերութեամբ և զգուշութեամբ պէտք է լինի։*

*Վերջին տեղը բռնում են բթամիտ, մոլորեալ և կատաղաբարոյները, որոնցից մեծ մասը 'ի բնէ այդպէս չեն, այլ աղաւաղեալ են։ Բայց որպէս բնութեան մէջ ամենայն թոյնի ընդդէմ՝ գեղթափ ևս կայ, և որպէս անպտուղ ծառերը, պատշաճաւոր կերպով տնկելով և պատշաճաւոր կերպով խնամելով, կարող են պտղաբեր դառնալ, նոյնպէս և այս դիպուածքի մէջ հարկաւոր չէ յուսահատուիլ, բայց պէտք է անխոնջ մնալ և խընամել. Բայց այս էլ կայ, որ հազիւ թէ հազար գլուխներից մինը այս տեսակից լինի։*

*Բոլոր առածի գումարը Պլուտարքոսի յետագայ խօսքերով կարելի է յայտնել. "Քանի որ երեխան մօր արգանդումն է, մարդս անզօր է նորա վերաբերութեամբ. թէ սեռը թէ տեսակը նորանից կախեալ չէ. բայց երեխայի ծնած օրից նա միանգամայն իշխան է, և մի և նոյն ժամանակ պարտական է—որ տեսակ որ լինի այն երեխան—նորան աճեցնել և զարգացնել դաստիարակութեան միջնորդութեամբ"։*

Շարունակելի։

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ Ի ԲԵՌԼԻՆ.

(Շարունակութիւն)

*Ուր որ այդպիսի գործունէութիւն կայ, այն տեղ անկարելի է՝ որ վարժապետը վհատի, ու իր սուրբ պաշտօնի մեծ նշանակութեան վերայ՝ գէթ վայրկեան մի երկբայի. որքան ևս տկար լինի նա՝ որպէս առանձին անհատ, որքան ևս հեռու գըտնուի նա մեծ բանակէն, ընկերներու յաղթանակաւոր ձայնը անշուշտ կը հասնի դէպ ի նա, ու նոր ոգի կըշնչէ նորա սրտին։ Նա միշտ կիմա-*